Ա.

Հովսիկ եւ Մասսատի հովիտը։

Ճորոխի ակունքը գտնւում է Ճորոխի Աւազանի կենդրոնում, Կազան Բաշի[1] լիս-

[1] Կազան-Բաշի լէն միացած է հարաւից Կազան եւ Սալախլի Բաշի լեռներին։ Ճորոխի կենդրոնական ակունքն է, որի արեւելեան փէշերից բղխում է՝ Ջիարէթ լճակից՝ Ջիարէթ առուակը, որի ափերին տարածուած է Փաշա-Փազի աւերակները։ Յուրէն-Շէհերի աւերակներից 7—8 կիլոմետր հեռաւորութեան վրայ այս ընդարձակ աւերակները ցոյց են տալիս, որ այս վայրում հնում, ոչ միայն Պարթեւների, այլ նրանցից էլ վաղ քաղաքակրթուած ժողովուրդ է ապրել։ Կազան, Կազան-Բաշի, Կազանչի, Կազանքէր, Կազանէքէր կոչւում են ամբողջ Հայաստանում բազմաթիւ աղբերակներ, առուակներ, լճակներ, որոնք բղխում են բարձր լերից։ Ջրաբաշխ կամ Սուկաւէտ լեռների դագաթից իջնում է դէպի արեւելա-հիւսիս Կազան-Ջուր առուակը, որ ապա անցնելով Ջարաբ-խանա գեղից, սրա անունն է վերցնում։ Արագածի վրայ գտնւում է մի լճակ, որ Կազանքէր է կոչւում, նոյնպէս մի գիւղ Կազանչի անունով։ Արփաչայի ակունքում՝ Արփա լճից ոչ հեռու, Ճահճների մօտ Կազանչի (Ղայղուլի) անունով մի գեղ կայ։ Դարալագեազից մի առուակ միանում է արեւելեան Արփաչային՝ Կազանչի անունով։ Կուր գետի ակունքը՝ Կոլագաւառում սկսում է Կազանէքէր լճակից։ Վանի լճի արեւմտա հիւսիսային կողմ Կոփ լեռների եւ Կոփ աւանի մօտ, Նազուկ լճակից ոչ շատ հեռու գտնւում է Կազան լճակը։ Մասի սարերին լանջերում կայ Կազանչի անունով գեղ եւ առուակ։ Գանձակի գաւառում կայ մի գիւղ եւ առուակ Կազան-Բուլակ անունով։ Ջեվադի գաւառում Կազանչի անունով գիւղ եւ առուակ կայ։ Դարսամանում կայ մի գեղ Կազանիշէ անունով, այնպէս որ Կազան բառը պիտի նշանակէ ջրերի յայտնութեան-բղխման կետ։ Ջրային զօրութեան յայտնութիւն (ΕΠΙΦΑΝΟΝ)։ Կովկասի լեռի Կազ-Բեգ լերան անունն էլ ընդհանուր Կազ արմատն է ցոյց տալիս։